


Մի ՄՈՌՆԱՐ ԶԻՍ



I ԿԵ ՆՈՒԻՐԵ I

01 JAN 2009

08 DEC 2011



ՅԱԿՈՎՅԱՆ

891.99

9-8-26

ՄԻ ՄՈՌՆԱՐ ԶԻՍ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ
ՑՈՒՑԱՐԱՆ

ԳՐԵՑ

Յ. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

ՀՐԱՍ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ Ի ՊՐՈՒՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Պ. ՄԱՆԵՍԱՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ՊԱԶԵԼ
1912

40-25222

13 MAR 2013

24904

406bU

ՁԵՐ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԱՎ ԻՄ ԲԱՐԻ ԵՆՈՂՔ

որ արտօիքն դարձիս, աւաշ՝ լման
տասնըվեց եւ տասնեւութ տարիներ
ի գու՛ր սպասեցիք շուշան հաւատքով,
եւ կարօտի նուրբով մխացիք, մխացիք,
մինչեւ որ խոնկի պէս անցաք, օրհ-
նութիւններ թողելով ծեր յիշատակին
կառչած պանդուխտի կեանքիս:



65625.67

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քաղաքակիրթ երկիրներու մէջ չես զաներ
մարդ մը որ իր ծննդեան միջդ օրն ու տարին
չփառնայ: Այս կարեւոր դէպքին տարեղարձը
ընտանեկան եւ բարեկամական շրջանակներու-
մէջ վայերւու կերպով կը տօնուի շնորհաւորու-
թիւններով, մայթաններով եւ նուէրներով:

Ուրախսավի է որ այս գեղեցիկ ու միանգամյան օպտակար ստորոտինը սկսած է մեր մէջ ալ մուտք գտնել, թէեւ տակալին բաւական ստուար է թիւը անոնց՝ որնն իրենց աշխարհի լոյսը տեսած օրն ու տարին չեն զիտեր ու զիանայու այ հոգ չեն տանիր:

Յիշեալ ստորոտիթեան մեր մէջ ընդհանրացու-
մը զիւրացնելու համար այսօր հրապարակ կը
հանեմ ներկայ գործս, որ սահմանուած է կէտա-
ւոր ստորերուն մէջ, ծնունդը պատահած ամսա-
թիւին դէմք, ամփոփելու՝ ընտանիքի անդամնե-
րուն, ազգականներու, բարեկամներու, դպրո-
ցակիցներու և մեզի հետ շփման մէջ գտնուող
կարեւոր անճնաւորութեանց անունները (լատ
կարեւոյն ինքնազիր) եւ ծննդեան վայրն ու
տարեթիւրը: — Յանձնաբարեկի նշանակել նա-
եւ մօտաւորներու ամուսնութեան եւ մահուան
թուականները:

Տարուան օրերուն թիւով քառեակներ պատրաստած եմ զանազան պարագաներու եւ տարբեր տպաւորութեանց ներքեւ, առանց երբէք խորհիլ յաւակներու, որ անոնք միացած՝ գրական արժանիք մը կրնան ներկայացնել, յայտնի ըլլալով որ՝ ջորս անծուկ տողերու մէջ ինծի տուն տուողը աւելի օգտագաշտութիւնն եղած է քան ներշնչումը։ Զանազիր եղած եմ պարզապէս օգտակար խորհուրդ մը մարմնացնել՝ տաղաչափական ըստ կարի վայելուչ պատմուժանի մը մէ։

Եւ իրաւցնէ մնծ պիտի ըլլայ սիրտիս բերկրութիւնը՝ եթէ քառեակներուն վիճակի արծարծել սէրը Գեղեցկին ու Բարւոյն, պաշտամոնքը Բնութեան եւ Աշխատանքին եւ ներշնչել պուտիկ մը կորով տառապանիքի որդիներուն եւ աղջկեներուն, որոնք աշքերնին արշարոյսի գուներուն սեւեռած սփոփարար նշոյի մը, ժպիտի մը, քառի մը սպասելէն, սպասելէն խունկի պէս կը միսան ու աղօթքի պէս կ'անուշնան։

Յ. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

Աղեքսանդրիա, 1912



«Կեանքի աղքիւր են լուրջ խօսքեր։

Անոնց արդիւնքն ո՞վ կը զգայ։

Ո՞վ է տեսեր փոքրիկ սերմին

Մէջ քընացող ծառն հրակայ։»

* * *

ՅՈՒՆՈՒԱՐ 1

Հո՞ն կը սկըսի դրախտի ճամբան՝
Ուր գոյգ զբուխներ են միաբան
Եւ ներդաշնակ՝ երկու սըրտեր,
Ուր դեռ կասկած չէ սըպըրդեր:



.....
.....
.....
.....

ՅՈՒՆՈՒԱՐ 2

Կ'ուզէք զիտնալ թէ ի՞նչ կ'արժէք —
Զեր ապրած կեանքն է ծեր արժէք.
Լաւ մըտածմունք, ազնիւ իղձեր
Զեն բարձրացներ արժէքը ծեր:



.....
.....
.....
.....

ՅՈՒՆՈՒԱՐ 3

Չուր տեղ ծեր սիրտը կը խարէք,
Մէրը վախճան մը չէ երբէք,
Այլ լոկ ճամբան, ուսկից պարտիք
Կրել անտրտունչ ամէն պարտիք:



.....
.....
.....
.....

ՑՈՒՑԱԿԱՐ 4

Երբոք մարդիկ վըհատին
Սիրտ սուլք անոնց պարզօքէն.
Խրախոյս շնչել վըհատին
Զայն ստեղծել է նորէն:

ՅՈՒՆՈՒԱՐ 5

Կը յաջորդէ մէք խորշանքին՝
եթէ ծանչնաք դուք առարկան.
Կեզտոտ կուզայ հանքէն ոսկին,
ՄԵտաղներու բնափր արքան:

ՅՈՒՆՈՒԱՐ 6

Դիսաւրի պէս հազուադէպ
Են ծշմարիտ բարեկամներ.

Շուտ բարեկամ կ'ըլլան ըստէպ
Աննիք որ հատ մը ցեն զսներ:

ՅՈՒՆՈՒԱՐ 7

Քեզի կանոն մ'ըլլայ ոսկի՝
Թէ գործի մէջ եւ թէ խօսքի
Ուղիղ ըլլալ ամէն ատեն,
Թող ինչ կ'ուզեն մարդիկ դատեն:

ՅՈՒՆՈՒԱՐ 8

Զարէն զատ աչքիս ոյինչ տրգեղ է.,
Յաւէրծ ապրելու տենչ մը սիրոս կըզգայ.
Մահն իսկ սիրուողի աչքին շըբեղ է.,
Մէրը այս կեանքին արեւն է հըսկայ:

ՅՈՒՆՈՒԱՐ 9

Խօսիլ արծաթ, լըռել ոսկի—
Կրնայ ըլլալ սա ֆշարիտ.
Բայց բարի գործ փոխան խօսքի՝
Ուլունքի դէմ է մարգարիտ:

ՑՈՒՆՈՒԱՐ 10

Կրնայ փոխել քար մը սոսկ
Խաղաղ ընթացքն առուակին.
Կրնայ լոկ մէ՛կ զործ կամ խօսք
Զեր կեանքն լնել ցաւագին:

ՑՈՒՆՈՒԱՐ 11

Եւ աստղերուն՝ բարին Աստուած
Սիրոյ, գութի կայծն է տուած,
Ու հրամայած՝ որ մնան աղթուն
Համբել արցունքը խեղճ մարդուն:

ՑՈՒՆՈՒԱՐ 12

Մինակ ապրիլ մեռնիլ է միշտ,
Սիրոյ տեղը կը զբաւէ վիշտ.
Բայց, բարեկամ, երկինք վըկայ,
Սիրոյ համար մեռնիլ չըկայ:

65625-67



ՅՈՒՆՈՒԱՐ 13

Ի՞նչ կայ գեղեցիկ քան վարդ ու շուշան.
— Մատեր ժըրաչան.
Ի՞նչ կայ թանկազին քան թէ մարզարիտ.
— Մէր մը ճշմարիտ:

ՅՈՒՆՈՒԱՐ 14

Զգացումներ մեզ կը տանին
Ցանախ հեռուն.
Լաւ է անսալ ուղիղ բանին
Ցորդորներուն:

ՅՈՒՆՈՒԱՐ 15

Ճաշակը ցոյց կուտայ սահման
Մեր զարգացման.
Բայց սէրը չափն է մեր ներքին
Արժանիքին:

ՅՈՒՆՈՒԱՐ 16

Երբ սիրան է բաց բնութեան ծայնին՝
Լաւ զործերու է ընդունակ.
Դեւերն անզամ իր դէմ կայնին՝
Ցառաջ կ'երթայ նա շարունակ:

ՅՈՒՆՈՒԱՐ 17

Տարին ունի չորս եղանակ,
Եւ միշտ նոյնքամ՝ կեսանքը մարդուն.
Բայց սիրան ունի մէ՛կ եղանակ—
Մէ՛ր, միշտ կայտառ, միշտ գուարթուն:

ՅՈՒՆՈՒԱՐ 18

Մանուկի մը ժպտող ազէն
Արուեստները պիտ' ամաչէն.
Սիրտին համար արցունքոտող՝
Բառ մը չունին արձան, կոթող:

ՅՈՒՆՈՒԱՐ 19

Ո՞հիր երբէք չէ մարդուն
Միրել, պաշտել իր Աստուած.
Ուրեմն ո՞նի՞ր է սիրել
Անոր ձեռքին կերտըւած:

ՅՈՒՆՈՒԱՐ 20

Կիտես յաջորդ ժամուն յարգը.
— Ան կը բերէ կեանքինդ փառքը.
Սահող ժամն ի՞նչ տարաւ իր հետ.
— Ծի՛լ կորզեց քնացող մէրէդ:

ՅՈՒՆՈՒԱՐ 21

Մութերու մէջ հիւծող բոյսին
Ճառազայիթներ կեանք տալ հասան.
Վիշտերու մէջ հիւծող յոյսին
Մէրը պիտի տայ բալասան:

ՅՈՒՆՈՒԱՐ 22

Եթէ հրէշին դուք բան մը տար՝
Կրնայ մեջանեղ ելլել հրեշտակ,
Բայց երբ ասկէ բան մ'է պակսած՝
Հրէշի փոխուի պիտ' անկասկած:

ՅՈՒՆՈՒԱՐ 23

Մէկ յաղթանակ կիրքի վըրայ՝
Ուրիշներուն դուռ կը բանայ.
Բայց կիրքերէն լոկ մ'կ նահանջ
Կ'ընէ զանոնք խստապահանջ:

ՅՈՒՆՈՒԱՐ 24

Օր մը կուգայ՝ երբ ամէն ինչ
Պիտի ըլլայ ի սպառ բնաշինջ.
Բայց սէրը դեռ պիտի սուրայ
Ուսկրներու կոյտին վըրայ:

ՅՈՒՆՈՒԱՐ 25

Դանծ դիզեցէք դուք անծանծիր,
Զեր մէ՛կ բանին չեմ նախանծիր.
Առէք ճեզ ինչ որ թուի աղէկ,
Բայց հանդարտ խիզճն ինծի թողէք:

ՅՈՒՆՈՒԱՐ 26

Սէրը որչափ տանչէք, գերփէք
Անի չըլլար սընանկ երրէք.
Անոր դէմ գուք զուք կ'ընթանար,
Ի՞րն է վերջին մեծ յաղթանակ:

ՅՈՒՆՈՒԱՐ 27

Բաղդ աշխարհին տիրել կ'ուզէք,
Բայց երկինքէն վար սահեցան
Յաղթողարար պարտիք ու սէր,
Ու դեռ կ'իշխեն միահնծան:

ՅՈՒՆՈՒԱՐ 28

Ու մեր սիրտե՞րն ալ կը հիւծին,
Թէեւ ունին ոյժն առիւծին.
Մէրեր չբնաղ նըման գաղնան
Գարնան պէս ալ մեռնիլ կընան:

ՅՈՒՆՈՒԱՐ 29

Ամբողջ կեանքին գործեր, բեռներ
Մեզ կ'երեւին ինչպէս լիոներ.
Միշտ կը քայէ մարդը խելօր,
Օրուան գործը քայլ մըն է լոկ:

ՅՈՒՆՈՒԱՐ 30

Հիւր են վիշտեր եւ ամպեր,
Կուզան, կ'երթան անհամբեր.
Ու մեզ նորէն կը թողուն
Մեր կապոյտը փողփողուն:

ՅՈՒՆՈՒԱՐ 31

Ինձ չի խօսիր արիւն հոտող
Դիւցազներու փառքին կոթող.
Ես կը ճանշնամ հերոս լոկ ա՛յն
Որ տիրած է անձին միայն:

.....
.....
.....
.....
.....
.....

ՓԵՏՐՈՒԱՐ 1

Վիշտ չէ տարբեր ջուրին ուժէն,
Վընաս եւ շահ ունի կերպ կերպ.
Մարդիկ յայնժամ պիտի տուժեն
Զայն գործածել չըգիտնան երբ:

.....
.....
.....
.....
.....
.....

ՓԵՏՐՈՒԱՐ 2

Կեանքն անիծել գործ մ'է ունայն,
Որ կը յայտնէ միտքի մըթերդ.
Ան ուրիշ բան չէ, այլ միայն
Ճերմակ, անքիծ թուղթի մը թերթ:

.....
.....
.....
.....
.....
.....

ՓԵՏՐՈՒԱՐ 3

Կեանք մը ազնիւ, օրհնաբեր՝
Գեղարուեստէն չէ տարրեր.
Բարեւդ՝ սիրով եթէ տաս՝
Նըկարէ մը չէ պակաս:

4

ՓԵՏՐՈՒԱՐ 4

Լաւ է մի դէմք զեղեցիկ,
Բայց լաւագոյն՝ ժիր մատեր.
Ամէնալաւն՝ սիրու բարի —
Ես երեքն ալ չեմ ատեր:

5

ՓԵՏՐՈՒԱՐ 5

Երեւնալուն եւ ըլլալուն
Մէջտեղը կայ վիճ մը անհուն.
Անմար, հանմար նման կը հնչին,
Բայց լեռ կ'անցնի ասոնց մէջին:

ՓԵՏՐՈՒԱՐ 6

Թողէք կեղծեն որքան կ'ուզեն,
Թուզ չըսպասեր մարդ լնկուզէն.
Զի ժածկուիր փիղին ժանիք,
Ոչ ալ մարդուն բուն արժանիք:

ՓԵՏՐՈՒԱՐ 7

Դժբաղդ մարդ ալ կայ արդարեւ,
Որուն ճապակլ չուզեր մէկ բան.
Եթէ մարգրիտ ցանէ արեւ՝
Կամ քուն ունի կամ ժակ գրպան:

ՓԵՏՐՈՒԱՐ 8

Յոռետեսը միշտ անկար է,
Վիշտեր ունի մըստացածին.
Չունեցածին ցաւն խանգարէ
Քերկրանքներն իր ունեցածին:

ՓԵՏՐՈՒՒԱՐ 9

Խըծբըծանքներն յիմարին,
Դատավիթումն անփործին
Որքան որ ալ յամառին՝
Չեն վընասեր լաւ զործին:

ՓԵՏՐՈՒՒԱՐ 10

Կատակն ըլլայ նըման աղի,
Միշտ չափաւոր անոր նըման.
Կատակողէ մը կատաղի
Մի՛ սպասէք զործ մը լըման:

ՓԵՏՐՈՒՒԱՐ 11

Կը բաւէ մէ՛կ օրինակ տուկ
Քան թէ հազար պերճարան խօսք.
Խօսքեր յաճախ միտքի շպար են,
Ազնիւ զործեր՝ սփրտիս պարէն:

ՓԵՏՐՈՒԻԱՐ 12

Երէկ, այսօր ու վաղուան օր,
Զզջում, զործեր, յախեր նոր նոր
Կազմեն կեանքին կարժն ու թեցուն
Անակընկալ դէպքով լեցուն:

ՓԵՏՐՈՒԻԱՐ 13

Մեզ դէմ մըղած մեր պայքարն
Չունի որոտ, զլողըրդիւն.
Զըկայ կրուստ մ'այնքան դառն
Որքան իփոճին պարտութիւն:

ՓԵՏՐՈՒԻԱՐ 14

Ես ծեր կեանքին նոխ, գեռուն
Եւ ոսկեզօծ հոգերուն
Զեմ նախանձիր, ո'չ երբէք,
Գոհ եմ հացովս չորաբեկ:

ՓԵՏՐՈՒԱՐ 15

Յամառութիւն եւ նկարագիր
Նոյն զոյն ունին, բայց տարբեր են.
Չար գործի տէրն ու համակիր
Զուրն են խըմած նոյն աղքիւրէն:

ՓԵՏՐՈՒԱՐ 16

Ոսկին քարով կը փորձեն,
Մարդ կը դատեն իր գործէն.
Զիս լաւ օրիդ մոռցա՞ր դուն —
Փորձաքար է բաղդ մարդուն:

ՓԵՏՐՈՒԱՐ 17

Կը քընանա՞ն, կը քընանան
Մեծ վիշտերն ալ ծովի նըման.
Կը քընանան խորունկ, յամառ,
Ու կ'արթըննան շըքեղ, կայտառ:

ՓԵՏՐՈՒԱՐ 18

Երջանկութիւն մը յարասեն.
Զարփը մը չէր ըլլար թեթեւ.
Տափակ կեանքէն կը նեղանար,
Կ'ուզէք զոնէ չորս եղանակ:

ՓԵՏՐՈՒԱՐ 19

Հեղեղներն են շատ սուն աւրած.
Դործէ լըոփկ, խօսէ կամաց.
Անձրեւն եղիր հանդարտահոս,
Եւ ոչ թութակ մը շատախօս:

ՓԵՏՐՈՒԱՐ 20

ՄԵ՛Կ օրուան իսկ չէ արժանի
Այն որ զործել կը վարանի.
Կեանք կ'ըլլայ այն ինչ որ կ'ընենք,
Այն չի ճանչնար կեղծիք ու նենգ:

ՓԵՏՐՈՒԱՐ 21

Կեանքեր կան մեծ եւ օրհնաքեր,
Որ իբր արեւ կը փողփողին,
Խծրծանքի միշտ անտարքեր,
Նըմանապէս մեր ներբռողին:

ՓԵՏՐՈՒԱՐ 22

Ասրած կեանքին է մարդ արժան,
Ինչո՞ւ կոչել բաղզը դաժան.
Դուն բաղզին տէ՞րն ըլլալ կ'ուզես —
Պարտիս գրաւել զայն բերդի պէս:

ՓԵՏՐՈՒԱՐ 23

Երջանկութիւն՝ ակի նըման՝
Պէտք է բղիսի սիրտի խորէն.
Ակն ա'յն ասեն զոհ է լըման՝
Զուր կը բաշխէ երբ ճոխօրէն:

ՓԵՏՐՈՒԱՐ 24

Սիրով կուտայի ծիրքերս բովանդակ,
Տանս տեղ կ'ընտրէի անշուրք մի վանդակ՝
Եթէ տրուէր ինձ լոկ բայրը վարդին,
Կապոյտը երկնից, ճայնը ճշմարտին:

ՓԵՏՐՈՒԱՐ 25

Դրախտը նախկին՝ երեք գետերու
Միջեւ զետեղուած վայր էր երջանիկ.
Արդի զըրախտէն երբէք չէ հեռու
Հօր, մօր ու զաւկին կազմած ընտանիք :

ՓԵՏՐՈՒԱՐ 26

Դիացիր օգտուիլ բաղդի ժըպիտէն,
Հոգ չէ թէ մահուան աջքեր քեզ դիտէն.
Բայց երբ մըթագնի քու պայծառ երկին՝
Քաջութեամբ տուկա՛ եւ յուսա՛ կրկին:

ՓԵՏՐՈՒԱՐ 27

Շատ զանձեր կան տակաւին
Երկրի ծոցը անյատակ.
Ճոխ զանձեր կան տակաւին
Մահկանացուին կուրծքին տակ:

ՓԵՏՐՈՒԱՐ 28

« Որքա՞ն փըշոտ է ուղիս, »
Բաւ պարագը ինքնիրեն.
« Համն ի՞նչ քաղցր է պըտողիս, »
Յարեց ջանքը մեղմօրէն:

ՓԵՏՐՈՒԱՐ 29

Նվաթով շաղուած միտքէն բընաւ
Բարի բան մի՛ ակրնկալեր.
Գայլը զառնուկ դեռ լրծընաւ,
Ոչ ալ շուշան՝ հողն ապակեր:

ՄԱՐՏ 1

Կ'երթայ արեւ, կուզայ լուսին.
Միշտ սփոփանք կայ ամսուսին.
Կեանքի վերջին կաթիլին հետ
Միայն կ'ըլլան յոյսեր անհետ:

ՄԱՐՏ 2

Ան որ չունի նըպատակ՝
Երբէք անծին չէ իշխան,
Հոսանքներու հըպատակ
Պիտի մընայ յաւիտեան:

ՄԱՐՏ 3

Գործով, երգով սահած կեանքին
Ոչինչ կրնայ զալ հաւասար.
Խոնջանքի վարձք, հանգիստ անզին
Կը մոռցլնեն քեզ լեռ ու սար:

ՄԱՐՏ 4

Կուրծքին վրայէն հարթ դաշտին
Սամի վըտակն անմըռունչ.
Բայց երբ խոչեր հանդիպին՝
Լըտուի երգին իր մրմունջ:

ՄԱՐՏ 5

Որոտ, շանթեր, բաղդ լսրթին
Եւ զատն բաժակն այս կենաց
Ոչինչ կ'ազդէն այն սրբափն
Որ րոկ սիրոյ է յենած:

ՄԱՐՏ 6

Մարդ զինք հազիւ զոհ կըզգայ
Երբ ձեռք բերուի նըպատակ.
Դործել օրէնք մ'է հըսկայ,
Եւ մարդ անոր նըպատակ:

ՄԱՐՏ 7

Զունին բարբառ, ոչ երգեր՝
Խորունկ զեսովը, խոր վէրքեր.
Դեսն երջանիկ ծովին տակ,
Վէրք կը բուժուի հողին տակ:

ՄԱՐՏ 8

Մինակ էի դաշտին երես,
Զանգակն մնչեց քաղցրաձայն,
Եւ ինքնաբուղին իմ շուրթերէս
Անուշ խօսքեր բարձրացան:

ՄԱՐՏ 9

Եթէ առողջ ես ու զիտուն՝
Մի՛ սպասեր հըրաշքի դուն.
Խորիդ տակ շատ առիթներ կան,
Շարժէ՛, բիչ վերջ կ'անցնի ներկան:

ՄԱՐՏ 10

Եթէ աշխարհ թողու զիս՝
Զի վըհասիր իմ հոգիս,
Միբող մունիմ գեռ անդին,
Որ ակն է իմ եռանդին:

ՄԱՐՏ 11

Նըպատակին բարի կամ չար՝
Կը զանես մլչու սէրը պատճառ,
Միջոցներն ալ ամէն ատեն
Անշուշտ անոր համեմատ են:

ՄԱՐՏ 12

Երազանքի մըլլար զերին,
Բաղդի վլշուրը մի՛ նետեր.
Կեանքն եւ արմէք լաւ պատկերին
Կը կազմեն միշտ մանըր կէտեր:

ՄԱՐՏ 13

Ուր որ զբազաւ մէքը ջինց՝
Ոգեւորեց ամէն ինչ.
Ճեղքեց մութին նա կեղև,
« Եղիցի լյս — եւ եղեւ: »

ՄԱՐՏ 14

Բաղրուս, ծկնորս նոյն բաներ են,
Ոգեւորուած նոյն կիրքերէն.
Որաք ինքնին՝ չնցն ինճոյք,
Որսաբու մէշն է բուն համոյք:

ՄԱՐՏ 15

Կեանքի համար կը կարօտին
Միաքեր ուսման, բոյսեր՝ օդին.
Անսէր սիրտն ալ պիտի մեռնէր,
Սակայն սիրով կը կըէ լեռներ:

ՄԱՐՏ 16

Անդարձ կորար աչքերէս,
Եւ մութ պատեց իմ երես.
Բայց գեռ կ'ապրիս սիրտիս բոլ
Եռապատիկ տուրբ կեանքով:

ՄԱՐՏ 17

Ի՞նչ համելի ժամն առանձին
Երբ կը խօսիմ ես իմ անձին
Ու կ'ունկընդրեմ անոր սիրուն
Պատափանին նուրբ շեշտերուն:

ՄԱՐՏ 18

Փայլի՞լ կ'ուզես զիտուս վերեւ.
— Պարզէ՛ երկինքն իմ միզապատ,
Ու իմ կեանքին լուռ, յուսահատ՝
Եղիր միակ երգն ու արեւ:

ՄԱՐՏ 19

Տիբել կուզէ մարդու որդին
Բարձունքներուն մինորտին.
Սակայն որչափ բարձր երթայ նա՛
Սիրտն ալ այնքան կը ցրտանայ:

ՄԱՐՏ 20

Խօսիլ արծաթ, լըռել ոսկի,
Երբ վընաս կայ ծայրը խօսքի.
Ոճիր՝ լըռելս, ոսկի՝ խօսքերս,
Երբ բամբասել ուզեն ընկերս:

ՄԱՐՏ 21

Յամափս ընտիր խօսք մը եւեթ
Կրնայ գտնել սիրտին մամբան,
Ու հոն ասլրիլ, փայլիլ յաւէտ
Մութը ճեղքող աստղի նըման:

ՄԱՐՏ 22

Ուրիշի գործն երբ զնահատես՝
Արժանիքիդ է այդ հանդէս.
Ու երբ գործիդ չես զովաբան՝
Կրնաս մեծնալ դուն անխափան:

ՄԱՐՏ 23

« Պատիւ, աչքեր, ապակի
Չեն զիմանար կատակի. »
Անուանաբլիք դու մարդէն
Փափէր, դահիճ մ՞է արդէն:

ՄԱՐՏ 24

Կ'առեմ ես սիրտն անարձազմիր,
Սիրոյ, զիշտի դէմ անսարքեր.
Կրնայ դառնալ ան մեծ փորձանը
Եւ մնուցանել օձեր, բարքեր:

ՄԱՐՏ 25

Բնութիւն եւ սէր
Մէկ մէկ քընար,
Աւա՛զ, շատեր
Չեն հասկընար:

ՄԱՐՏ 26

Սէրը չէ բեռ
Մ'այնքան թեթեւ,
Բայց ոյժ կայ դեռ
Անոր ետեւ:

ՄԱՐՏ 27

Գործիդ, խօսքիդ
Ու նըշմարիդ
Մէջ թող տիրէ
Մէր ճըշմարիստ:

ՄԱՐՏ 28

Խոհեմութեան մէջ երկիւղն ալ
Կընայ մեծկակ մաս մ'ունենալ.
Եւ քաջութիւն չէ միշտ հաղորդ
Ցանդցնութեան անմիտ, յոխորտ:

ՄԱՐՏ 29

Ցաջողութիւն չէ քու վախճան
Ուր պիս' հանգիս դուն վերջապէս.
Ան ուժերուդ է լոկ իրախճան,
Պէտք է դեռ շատ մղոններ չափես:

ՄԱՐՏ 30

Մէկ մասն արդէն յաջողանքիդ
Սըխալներուդ ես պարտական.
Բայց այս չըլլայ կանոն կեանքիդ,
Անքուժելի սխալներ ալ կան:

ՄԱՐՏ 31

Զանգակները իրիկուան
Օրուան մահը կը զուժեն.
Օրը կորզեց յաւիտեան
Մեծկակ մաս մ'ալ մեր ուժէն:

ԱՊՐԻԼ 1

Անտես կ'ընես ցաւն ընկերին,
Գոյց կը պահես քսակիդ բերան,
Եւ աղօթքներդ կը դեգերին
Ջղչիկի պէս զվսուդ վըրան:

ԱՊՐԻԼ 2

Ան որ վիշտին, արցունքին
Կրնայ տուկալ անվըրդով՝
Երջանկութեան բարձունքին
Ալ կը տուկայ նոյն սըրտով:

ԱՊՐԻԼ 3

Հաւագոյն է մԵԿ լաւ մատեան
Քան թէ հազար հատ յոռի.
Բայց զերադաս է զիբք բնութեան
Հազար հատ լաւ հատորի:

ԱՊՐԻԼ 4

Երզը կեանքին աղն ըլլայ թող,
Եւ աշխատանք՝ շունչ մեր կեանքին.
Ամէն գործող է աղօթող.
Յամաք խօսողն շապարի հոգին:

ԱՊՐԻԼ 5

Օրը զովէ՝ երբ վախճանի,
Բայց մարդը՝ երբ դեռ կենդանի.
Ներողներէն մահամառին
Խեղդ մեռեալներ դեռ համ չառին;

ԱՊՐԻԼ 6

Ժամանակը մանաւանդ
Է գերազոյն մէկ աւանդ.
Հարցուք անժիղ՝ եղածը դուն
Հաւատարիմ եւ արթուն:

ԱՊՐԻԼ 7

Աշխատութիւն զանձ է անզին,
Միշտ գերազաս իր արդիւնքին.
Ծոյլ ձեռք, ծոյլ սիրտ, ծոյլ միտր յաւ էտ
Յառաջ բերած են մեծ աղչու:

ԱՊՐԻԼ 8

Բնութիւն՝ բոլոր նոր ու հին
Արուեստներու թագուհին.
Ան որ բնութեան չունի սէր՝
Կեանքին համը չէ տեսեր:

ԱՊՐԻԼ 9

Մաքուր սիրտի
Եւ կամքի տէր
Մարդիկ բընաւ
Վախս չեն զիտեր:

.....
.....
.....
.....
.....

ԱՊՐԻԼ 10

Կեանքն ունի ծով
Եւ տարտարու.
Խղճմշտանքն իր
Միակ փարոս:

.....
.....
.....
.....
.....
.....
.....

ԱՊՐԻԼ 11

Սէր, յոյս կուզան
Միշտ թեւ թեւի,
Բաղդն ալ անոնց
Կը հետեւի:

.....
.....
.....
.....
.....
.....

ԱՊՐԻԼ 12

Կեանքն ատաղծ մ'է ինքնին բարի.
Դաւանանքս է սա խորին.
Մէկն այդ փայտէն քնար կը շինէ,
Միւսն այ' շեմեր ախոռին:

ԱՊՐԻԼ 13

Ինչ գըրախտներ կը բողբոջէն
Մեր սիրտին մօտ, մեր առջին,
Ու մեր ծարաւ, յիմա՛ր աճքեր
Դեռ աստղերուն կը կառջին:

ԱՊՐԻԼ 14

Սիրտը չէ լոկ վիշտի աղբիւր,
Ան բերկրանքներ ալ ունի բիւր.
Եթէ քեզմով չես բերկրիր դուն
Դիտի անշուշտ շեղիս հեռուն:

ԱՊՐԻԼ 15

Բերկրանք եւ վիշտ կը կարօսին
Հաղորդուելու մեր ծանօթին.
Ջըսպըւած սէր, հառաջք թագուն
Կընան դառնալ հիւծախտ հոգուն:

ԱՊՐԻԼ 16


Գալնան ամսի շղարշներ բարակ,
Երազներու հըմայք անզին,
Ո՞հ , չեն ցնդիր այնչափ արագ
Ինչպէս օրերն մարդու կեանքին:

ԱՊՐԻԼ 17

Ծով մ'է սէրը անհուն, խորին.
Ունի ծըփանք եւ խենդ ալիք,
Դահէ զանձերն նա ժընորին՝
Հիանալիք եւ . . . խընդալիք:


ԱՊՐԻԼ 18

Մի՛ սպաններ դուն ճըմին,
Ան ոքան ալ է չնշին.
Թերեւս անոր տուաւ Տէր
Գործ մը , զոր դուն չես զիտեր:




ԱՊՐԻԼ 19

Տրտում սիրտով տեսայ շատեր
Որ սէրը չեն զընահատեր.
Բայց հրմուեցայ՝ երբ ցողերէն
Ծաղկներ շատ գոհ եղեր են:



ԱՊՐԻԼ 20

Կապուտագեղ երկնից վըրան
Ամպ մը լարեց իր սեւ վըրան.
Ամպը զընաց. կապոյսն հոն է.
Անցողական չէ ա՞ն զոնէ:



ԱՊՐԻԼ 21

Որքան չնցին ըլլան խոտեր՝
Անոնց վըրայ մի՛ կոխոտեր.
Ամէն մէկ ծիլ՝ նըման տունի՝
Երկնից ցողը հիւր կ'ընդունի:

ԱՊՐԻԼ 22

Այգուն ցողին պէս թափանցիկ,
Անշարժ, անձայն՝ ինչաէս Սփինքս,
Երբ ես խօսիմ՝ կը պապանմիք —
Ստեղծագործ Սէրն եմ ես ինք:

ԱՊՐԻԼ 23

Վընասակար են արդարեւ.
Ճոխ անճռեւներ ու շատ արեւ.
Ուկի կանոնդ ըլլայ միջակ,
Ատով չափէ ամէն փիճակ:

ԱՊՐԻԼ 24

Խոտեր լեզի
Պէսք են ղեղի,
Եւ սիրաւ՝ հըզօր
Կ'ընէ դառն օր:

ԱՊՐԻԼ 25

Կեանքի ժամբան
Մինչեւ դամբան
Գիծ մ'է պարտուց,
Ոչ մին զըծուժ:

ԱՊՐԻԼ 26

Բաղզն ունի իր
Անակլնկալ.
Զանա, եղիք
Լաւ հիւրընկալ:

ԱՊՐԻԼ 27

Եահու կուռքին առջեւ հազար
Մէրեր կ'ըլլան գեանի հաւսար,
Ու պատիւներ խունկի նըման
Իր բազինին վրայ կը մըխան:

ԱՊՐԻԼ 28

Մէրը՝ նըման փորուռղ հորին՝
Քանի սպառես՝ կ'ըլլայ խորին.
Փառք եւ հաճոյք մինչեւ դամբան
Պիտի պճնեն սիրոյ ճամբան:

ԱՊՐԻԼ 29

Կեանք՝ լի հարցով, աստղով՝ երկին,
Շատ քիչերուն կայ պատասխան.
Պատասխաններն ալ ի կարգին
Նոր հարցերու ծընունդ կուտան:

ԱՊՐԻԼ 30

Քիչերը լոկ ճանչցան ներկան.
Մանկանց նըման դեռ շատեր կան,
Որ երջանիկ են խսկորէն,
Բայց չեն զիտեր, կուլան նորէն:

ՄԱՅԻՍ 1

Լոյս կը ցոլար գեղեցկօրէն.
Ժպտեցաւ Տէլն միահեծան.
Իր ծիածան ժըպիտներէն
Ծաղիկներ վար թափթըլիցան:

ՄԱՅԻՍ 2

Խօսքեր՝ հովի պէս տարածուն՝
Միշտ վաղանցիկ ու թեթեւ են.
Գործ երկաթի պէս, կուռ, լեցուն՝
Կեանք կը թողու իր ետևէն:

ՄԱՅԻՍ 3

Օքնութիւններ յաճախազին
Նեղ օրերէդ քեզ կ'ազատեն.
Բայց բարիքէն անկախ կեանքին
Պիտի զրկեն քեզ նոյն ատեն:

ՄԱՅԻՍ 4

Զար խօսք՝ ծիւնէ գունդի մը պէս
Կը ստուարանայ՝ քանի զլորես,
Բայց ցոլերէն ծշմարատւթեան
Շուտ կը հալի ծիւնի նըման:

ՄԱՅԻՍ 5

Թող ծերն ըլլան բաղդին բարիք,
Փառքի ցնորքներ օդապարիկ.
Ինձ թողէք լոկ հաւատք, յոյս, սէր,
Ա՛լ ուրիշ բան ես չեմ ուզեր:

ՄԱՅԻՍ 6

Շատ ասողեր կան դեռ անանուն,
Բիւր համոքներ՝ կընիքի տակ.
Դեռ չենք ճանչնար ցաւն ամէնուն,
Սիրտն ալ ծով մ'է մութ, անյատակ:

.....
.....
.....
.....
.....

ՄԱՅԻՍ 7

Կեանքի վիշտին հոծ տարավին
Զի դիմանար պողպատն անզամ.
Սիրտեր որբան ալ տառապին՝
Հատ մը կըրել դեռ կը ցանկամ:

.....
.....
.....
.....
.....

ՄԱՅԻՍ 8

Նըպատակը այս կարմ կեանքին
Տառապիլ մ'է դիւցազնօրէն.
Ուկի ցնորքներդ երբ կը յանզին՝
Երջանիկ ես դուն այն օրէն:

.....
.....
.....
.....
.....

ՄԱՅԻՍ 9

Որքան զանձեր
Հաւաքեր են
Խելօք անձեր
Հաւ զիրքերէն:

ՄԱՅԻՍ 10

Երբ դուք զործել
Կրնաք մեռքով
Ամէն զործ յարգ
Ունի ձեր քով:

ՄԱՅԻՍ 11

Գործը կ'ըսայ
Միշտ կենդամի
Երբ մաս մը մեր
Կեանքէն տանի:

ՄԱՅԻՍ 12

Սիրէ, ապրիլ թէ կամիս,
Ապրէ, սիրել թէ կամիս.
Առանց պիրոյ այս կեանքը
է անծաղիկ մի Մայիս:

UU3hU 13

Թօքունէ զուրկի ի՞նչ է բյոնը,
Առանց լոյսի ի՞նչ է զոյնը,
Ծաղիկէ զուրկի ի՞նչ է Մայիս,
Առանց սիրոյ ապրիլ կամիս:

ՄԱՅԻՍ 14

Բնութիւն պարզեց ճոխ սեղան,
Ուր բիւր շնորհներ կը տեղան.
Վիշտեր քու սի՞րտդ են գրաւեր,
Ընդունէ շուտ իր հրաւեր:

ՄԱՅԻՍ 15

« Ծանիր զբեզ » — թող անզին
Կանոնն ըլլայ քու կեանքին.
Կեանքիդ պըսակ զերազանց՝
« Ընկերդ սիրէ դուն սրտանց: »

ՄԱՅԻՍ 16

Երբ քեզ հարցնեն՝ ինչպէս կամիս,
« Մայիս թող զայ ամէն ամիս »
Պիտ' որոտաս անմիջապէս,
Եւ ամէն բան սըխալ չափես:

ՄԱՅԻՍ 17

Աստղերն երկնի, ծաղկներ զարնան,
Ցոյսը կեանքին, շողն արեւուն՝
Պիտ' հաւասար զալ չը կընան
Անմեղ սիրտի մը սիրասուն:

ՄԱՅԻՍ 18

Եաղիկներ, դուք սաղմոններ էք,
Եւ դուք, աստղեր՝ պատարագ,
Հովեր, անուշ խունկ կը բերէք —
Ոհ, մի՛ անցնիք շատ արագ:

ՄԱՅԻՍ 19

Զգոյշ կեցիր լըոիկ զետէն՝
Որու յատակը չես տեսներ.
Դոց սիրտի զոհ եղան արդէն
Հազարաւոր քեզի պէսներ:

ՄԱՅԻՍ 20

Ու ժայռերը ծովեղերքին
Եալրեն ալիքն փոթորկաւէք,
Հոն ունկճնդրած դարուց երգին
Ցամատ կամքի կուտան դասեր:

ՄԱՅԻՍ 21

Եւ կը ծըլին, կը բողբոշեն
Մինչեւ անզամ մոխրին մէջէն,
Միշտ կը ծըլին ու կը ծաղկին
Ցոյսեր նըման զարնան ծաղկին:

ՄԱՅԻՍ 22

Սոխակներուն շնորհիք կը պակսի.
Լորձունք կ'ըլլայ թել մետաքսի.
Աւելցուքն է մեղրը մեղուին.
Տգէտներ որբա՞ն շուտ կը խարուին:

ՄԱՅԻՍ 23

Անձրեւ, խըրատ երբ չափն անցնին՝
Վընասաբեր կ'ըլլան ինքնին.
Չափաւորը՝ ճամբան միջակ՝
Կը պըսակէ ամէն վիճակ:

ՄԱՅԻՍ 24

Դործերդ քարի
Դուն մի՛ զովեր,
Սընափառի
Մառներ հովեր:

ՄԱՅԻՍ 25

Զրուանքի
Մէրն անպայման
Պիտի յանզի
Միշտ քայլայման:

ՄԱՅԻՍ 26

Մահուլն առջի
Բռնած ճիւղին՝
Յոյս կը կառչի
Յարդի շիւղին:

ՄԱՅԻՍ 27

Շա՞տ զարուններ եկան, անցան,
Ոսկի ամպեր եղան ցիր ցան.
Շա՞տ երազներ տուիր հովին,
Ու կ'երազե՞ս, սիրո, տակաւին:

ՄԱՅԻՍ 28

Անցեալին մէջ դագաղներ կան,
Պարարով լիցուն է քու ներկան.
Երբ կ'աշխատիս լուրջ եւ արթուն՝
Վաղուան համար մի՛ հոգար դուն:

ՄԱՅԻՍ 29

Գեղն ու բոյրը բաժնէ վարդէն —
Ան չի խօսիր այլեւս հոգուդ,
Ցոռի թուփ մը եղաւ արդէն,
Վարդ անունն ալ չըններ օգուտ:

ՄԱՅԻՍ 30

Երջանկութիւն է անպատճառ
Մահկանացուին արժանի.
Երջանկութեան ջուխտակ տաճար՝
Բնութիւն եւ յարկ ընտանի:

ՄԱՅԻՍ 31

Յստակ մէկ միտք, առողջ մարմին
Եւ ասոնց հետ սիրս մը կայտառ՝
Շըքեղ պսակն են մարդու զարմին
Եւ իրաւունքն անոր արդար:

ՑՈՒՆԻՍ 1

Անգործ ուժեր ջունին օգուտ,
Կրնան նոյն իսկ առթել վրնաս.
Երբ վստահ ես դուն ուժերուդ՝
Փոքրիկ հրաշբներ գործել կրնաս:

ՑՈՒՆԻՍ 2

Շատ տառապող սիրտն է նըման
Հաւ հերկուած լնտիր արտին,
Երբ եղանակն հասնի լըման՝
Կը տեսնես ճոխ արդինք չորս դին:

ՑՈՒՆԻՍ 3

Միտքի, սիրտի ծիրքեր աղուոր՝
Երբ քաջութեամբ չօժանդակուին՝
Պիտի յաւէտ մընան անզօր,
Եւ հուսկ չորնան բոլորովին:

ՑՈՒՆԻՍ 4

Իր ծաղրանքին մէջ թեթեւուն
Կ'արտափայլէր պատկերն հոգուն,
Աւ գործերուն մէջ միզապատ
Տեսայ սիրտին լայն անապատ:

ՅՈՒՆԻՍ 5

Եաղկիս տուի ջուր առաս,
Տեսայ անոր դառն կորուսա.
Եաղիկով մ'եմ արդ աղքատ,
Փորձառութեամբ մը հարուստ:

ՅՈՒՆԻՍ 6

Բաղզը ջանքելն իտհեմ, անդուլ՝
Չուզեր երբեք անվարծ թողուլ.
Քերուած զոհելն անձէն, քսակէն
Պիտի անշուշտ գործը պսակն:

ՅՈՒՆԻՍ 7

Յաջողութեան հետը զաղտուկ
Կուզայ յամախ նաեւ տաղտուկ.
Անզամ մը տեղ զըտա՞ւ իրեն —
Զիդ կը կրծէ անյազօրէն:

ՅՈՒՆԻՍ 8

Անարդար շահ
Եւ ծուռ ուղի
Միշտ կը նստին
Մեզ շատ սուղի:

ՅՈՒՆԻՍ 9

Վարձքը արդար
Աշխատանքին
Յաղթութեան պէս
Է շատ անգին:

ՅՈՒՆԻՍ 10

Զըլար անտես
Ըստիր մարմար,
Կը զսնէ միշտ
Իր տեղն յարմար:

ՅՈՒՆԻՍ 11

Պարապ ջանք է բաղդ խուզարկել.
Անմիջապէս եւ անարգել
Կրնաս զսնել դուն այս պարզեւ՝
Եթէ փնտուես կուրծքիդ ներքեւ:

ՅՈՒՆԻՍ 12

Բաղդը նըման է երանգի,
Որ կախուած է լոյսէն յաւէտ.
Ուր որ սիրսի մէրն կը յանգի՝
Կը կորսուկի՛ բաղդը անհետ:

ՅՈՒՆԻՍ 13

Քաղցըր յուշքեր հին օրերուն
Ներկան կ'ընեն բուրումնաւէտ,
Եւ ապազյ յոյսեր սիրուն
Հոգւոյն թեւեր կուտան յաւէտ:

ՅՈՒՆԻՍ 14

Բաղզը, փառքը նաեւ բարին
Բոլորտիքը կը թափառին,
Բայց դուն զանոնք չես նշմարեք,
Ու կը վնտուես հետու վայրեք:

ՅՈՒՆԻՍ 15

Պարտի զգացմունք որբան խոր են՝
Մարդ զինք կըզզայ այնքան տոկուն.
Ան չազդուիր երբեք ժխորէն,
Այլ միշտ կ'անսայ լոկ իր հոգուն:

ՅՈՒՆԻՍ 16

Պլառուղ արժէքն է ծառին,
Եւ ճուռողիւն՝ ծիծառին.
Մարդուն արժէքն՝ ո՛չ քըսակ,
Այլ գործերն են իր պըսակ:

ՅՈՒՆԻՍ 17

Յաշողութիւն քսակին, զիտուն
Հրասոյր ջունի, չէ հաստատուն.
Բայց երբ շահուի սիրափ ճամբով
Յաղթանակ մ'է այն ապահով:

ՅՈՒՆԻՍ 18

Սիրով պալատ կ'ըլլայ մըսուր,
Եւ նոր աշխարհ կ'ելլէ մարդէն.
Ծառայել չէ վաստակ մը գուր,
Խոնարհելով մնձ էք արդէն:

ՅՈՒՆԻՍ 19

Պիտի մարդիկ քու ծեռնարկէն
Քու անմնականդ միայն յարգեն.
Ինչ որ դուրսէն ես փոխ առած՝
Զի կազմեր մասը քու փառաց:

ՅՈՒՆԻՍ 20

Յոյսերուս հետ կը սպառի
Կեանքի տենչանքըս բարի.
Յոյսն է արեւ իմ կեանքին,
Եւ սէր՝ անոր հուրին անզին:

ՅՈՒՆԻՍ 21

Մահուն մէկ ջուր, թիգ մը կապոյտ,
Քիչ մ'ալ կանանց բաւ են հոգւոյս.
Բաղդի հմայքին իսպառ անփոյթ՝
Կ'ապրիմ այսպէս անփիշտ, անյոյս:

ՅՈՒՆԻՍ 22

« Բարեկամներդ » — պէտք է; զիտնաս,
Կ'առթեն բեզի շատ հեղ վընաս.
Մինչդեռ ոչ իսկ մէկ անզամին
Զիշանեցաւ քու թշնամին:

ՅՈՒՆԻՍ 23

Զանքը մինակ
Առանց խելքի
Միշտ հասած է
Տըխուր ելքի:

ՅՈՒՆԻՍ 24

Խելքը մինակ
Առանց չանքի
Չունի արժեք
Ոչ մէկ թանկի:

ՅՈՒՆԻՍ 25

Խորհելու մէջ՝
Երկար, բարակ,
Գործելու մէջ՝
Ջոյշ, արագ:

ՅՈՒՆԻՍ 23

Զանքը մինակ
Առանց խելքի
Միշտ հասած է
Տըխուր ելքի:

ՅՈՒՆԻՍ 24

Խելքը մինակ
Առանց ջանքի
Չունի արժէք
Ոչ մէկ թանկի:

ՅՈՒՆԻՍ 25

Խորհեղու մէջ՝
Երկար, բարակ,
Գործեղու մէջ՝
Զգոյշ, արագ:

ՅՈՒՆԻՍ 26


Գեղեցիկը ճշմարիտ է,
Ճշմարիտը է գեղամի,
Եւ բարութիւն մարզարիտէ
Պըսակի մը կը նըմանի:

ՅՈՒՆԻՍ 27

Մէրը ուժին հետ միաբան՝
Կը բանայ քեզ դրախտի ճամբան.
Բայց մէրը երբ զատես ուժէն՝
Դիտի մարդիկ շատ բան տուժեն:

ՅՈՒՆԻՍ 28

Յաջողութիւն, պատիւ ու սէր
Պատահարէն մի՛ սպասեր.
Ժիր ձեռք, լաւ սիրտ եւ միտք նրբին
Մէկտեղ կ'ըլլան բաղդին դարբին:



ՅՈՒՆԻՍ 29

Կուզե՞ս ըլլալ վեհանձն, հրզօր,
Զբւարի, ազնիւ, խոնարի, պարկեշտ
Եւ ինչ որ գեռ կ'ըղձաս այսօր.
— Սիր՝ ընտթիւնն անհըրաժեշտ:

ՅՈՒՆԻՍ 30

Ամէն անձի մէջ պահուած կան
Գանձեր առասո ու պատուական.
Երբ ժիր մշակն էք դուք ճեր անձին՝
Տէրը կ'ըլլար անոր զանձին:

ՅՈՒՆԻՍ 1

Ոչ դաշնամուր, ոչ խոհասուն
Կրնան ճշդել կնոշ արժանիք.
Ժիր ճեռոք, բաց սիրո ու դէմք ժապուն
Կ'ընեն անոր տունն երջանիկ:

ՅՈՒԼԻՍ 2

Ընտիր կանոն « Եանիր զքեզ » —
Անձն է ուսման լայն ասպարէզ.
Երբ բաւական ճանչնամ իմ անձ
Պիտի կուռքերս քանդեմ հիմանց:

ՅՈՒԼԻՍ 3

Զի ժանգուտիր մարտը ոսկին՝
Ուր որ ալ զայն նետել փործեն.
Ազնիւն ալ միշտ տէր իր խօսքին՝
Դիւրաւ ճանչնաք պիտ' իր զործեն:

ՅՈՒԼԻՍ 4

Երբ հասկլնաս ընութեան լեզուն՝
Հըրաշըներով, շնորհրով լեցուն՝
Պիտի մասնէ քու գուարի երես
Որ դուն զգայուն սիրափ տէր ես:

ՅՈՒԽՅԱ 5

Եթէ անձը քեզ չի բաւեր՝
Զուարժասէր կ'ըլլաս հարկաւ.
Բայց զեղիս կեանքին յդացած ցաւեր
Դիափ յայտ զան օր մը կարգաւ:

ՅՈՒԽՅԱ 6

Բարկութեան մէջ ակնարկ մը սոսկ,
Բերնէ թըռած տենդուտ մի խօսք,
Եւ կամ ծեռքի շարժում մը բիրս
Կը պատկերեն ինծ մարդուն սիրս:

ՅՈՒԽՅԱ 7

Լաւ նըշան է՝ եթէ կրնաս՝
Բարկութեան մէջ զագել քու անձդ,
Վիրքին արդիւնքն է միշտ վընաս,
Զոր չեն քաւեր պատիւդ ու զանձդ:

ՅՈՒՂԻՄ 8

« Գործել կեանք է, և հնատիպ առած,
Ան է ճամբան բաղդի, փաւաց.
Ծոյեր մուրան պիտի մէկ օր
Հացի վըշուր, փայտի բեկոր:

ՅՈՒՂԻՄ 9

Պիտի աշխարհ լայն շունչ մ'առնէր,
Միասմաբար եթէ կիներ
Հաստատէին ուխտ մը սիրուն . . .
Խօսադր' լ մը լեզուներուն:

ՅՈՒՂԻՄ 10

Մէկ նըպատակ, մէկ փոխարէն
Սահմանուած է մեզի վերուստ —
Կրթել մեր անձը լրջօրէն,
Սփռել անոր գանձերն հարուստ:

ՅՈՒՂԵՍ 11

Լաւ է ուտել
Լոկ հաց ու սոխ
Քան ունենալ
Պարսք ու սոսի:

ՅՈՒՂԵՍ 12

Վիշտ՝ շատախոս
Է մի որդի,
Կը կըռկըռայ
Նըման գորափ:

ՅՈՒՂԵՍ 13

Քաջութիւնը
Ապրանք մ'է լոկ,
Զոր կը ծախսն
Խենդն ու խելօք:

ՑՈՒՀԻՒ 14

Φορδωπούθεων ψυκτής ήσσρων,
θηγυσθρόη ηθηρικής φύσης ψερρών.
Τηρί ψυσταθήριο ηποτελέσθη,
ηθηρικής μετάνωσης ήσσρων.

ՅՈՒՂԻՄ 15

**Արեւ, անձրեւ, ժըպիտ, արցունք
Միշտ չափաւոր ըլլալ պարտին,
Որ չանհետին ծաղկին փայլ, խունկ
Ու տերեւներ սիրոյ վարդին:**

ՅՈՒՂԻՄ 16

Անձին լիշտան ո՞վ է միթէ.
— Ան որ լեզուն զապել զիսէ.
Եւ ո՞վ է իր անձին զերի.
— Որ կերպի մէջ կը դեգերի:

ՅՈՒԼԻՍ 17

Յօդի հասին մէջ տեսայ
Երկինքն ամբողջ իր փառքով,
Արցունքի մը մէջ տեսայ
Մօր մը սիրտը իր խորքով:

ՅՈՒԼԻՍ 18

Պղտոր չուրը չարտափայլեր
Աբեզակին ոսկի շողեր,
Ոչ ալ կեղտոտ սիրտեր կ'ըլլան
Մաքուր սիրոյ ընդունարան:

ՅՈՒԼԻՍ 19

Պատիւի չափ թանկագին
Զիկայ գոհար մը երբեք.
Անի զարդն է մեր կեանքին,
Զարդ մը շողուն, դիւրարեկ:

ՅՈՒՂԻՄ 20

Դատարկ գըլուխ, պարապ տակառ
Աղմուկ հանեն պիտ' անսպատճառ,
Եւ յոխորոտան պիտ' արտին մէջ
Գոռող հասկերը սընամէջ:

ՅՈՒՂԻՄ 21

Տառապանքն է խըթան մարդոց,
Խսկ հեշտութիւն՝ կեանքի խարտոց.
Տառապողին սիրտն՝ անթառամ,
Հեշտասէրին կեանքը՝ զառամ:

ՅՈՒՂԻՄ 22

Քաջի զործ չէ ամպոտ օրէն
Սարսափահար լալ վատօրէն.
Վաղուան չարեաց դէմ անվըրդով
Արիացիր տոկուն սըրտով:

ՅՈՒԼԻՍ 23

Զօրւը տեղ հեռուն, երկիր, երկին
Ճար կը վնասուէք սիրոյ վէրքին.
Ասուած սիրտի ցախին դեղեր
Սիրտի մօսերն է զետեղեր:

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

ՅՈՒԼԻՍ 24

Կ'ուզե՞ս որ վիշտն յալթահարի,
— Հեզնէ՛ դու զայն սիրտով արի.
Մոնչող առիւծք իսկ թըշուառին
Անվախ դէմքէն կը շըւարին:

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

ՅՈՒԼԻՍ 25

Շատեր քեզ պէս դեռ չեն զիտեր՝
Թէ իրենք չեն այս կեանքի տէր.
Մերթ յարմարիլ պատահածին
Խորհուրդ մը չէ մըտացածին:

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

.....
.....
.....
.....

ՅՈՒԼԻՍ 26

Մարդիկ ինչ որ
Ունին անզլն՝
Կը պարտին լոկ
Աշխատանքին:

ՅՈՒԼԻՍ 27

Հաստատ կամքը
Ոյժ մ'է թագուն.
Ոյժ մ'է նոյնքան
Միտքը ժըկուն:

ՅՈՒԼԻՍ 28

Ներել խևոյն
Յատուկ է լոկ
Միրտին ազնիւ,
Գլխուն խելօր:

ՑՈՒԼՑՈՒ 29

**Որեւիցէ անունի տակ
Պիտի բուրքէր վարդն ազնիւ.
Որեւիցէ հազուստի տակ
Պիտի յայտ գար մարդն աղնիւ:**

ՅՈՒՂԻՄ 30

Ծովին վրայ ահեղասաստ
Կրնաս զովել քու առազաստ.
Առաքինի՞ ես — չեմ զիտեր,
Խաղ, կին, զինի բեզ չե՞ն լիլթեր:

ՅՈՒՂԻՄ 31

Ուռենիի պէս ճըկուն,
Կաղնիի պէս հաստատուն —
Սիրոտն ըլլայ բոյն գորովի,
Եւ կամքն՝ անշարժ, կորովի:

ՕԳՈՍՏՈՒ 1

Վատակին եզրը ծաղիկ մը կայ.
Շուշտ ըրէ զայն սիրոցդ վըկայ.
Պարագաներ, ծաղիկ, աղջիկ,
Երազներն այս կը փախչիք:

ՕԳՈՍՏՈՒ 2

Քարին ծոցը կայծ կայ պահուած,
Անոր կուտայ կեանք մէ'կ հարուած.
Յօդ մ'է հանզէեր ծաղկին վըրայ,
Հըպում մ'անոր մահը կ'ըլլայ:

ՕԳՈՍՏՈՒ 3

Քու սեպհական ուժիդ յենած
Բերդ մը եղիր անառիկ.
Օժանդակի պէստք չեն զզար
Ոչ առիւծներ, ոչ Աստուած:

v

ՕԴՈՍՏՈՒ 4

Դիշերները կ'անցնին կարգաւ,
Այս ալ պիտի անցնի հարկաւ,
Ու վերջապէս մակափիդ վերեւ
Պիտի փայլի բաղդին արեւ:

ՕԴՈՍՏՈՒ 5

Ինչ որ այսօր ընել կրնաս՝
Բընաւ վարուան մի՛ թողուր.
Յապաղումներն իսկ անվընաս
Կրնան զըծել հետքեր տիտուր:

ՕԴՈՍՏՈՒ 6

Շահու մարմաշ, երազ փառաց
Բնտիր ծիրքեր են սպառած.
Ոճրագործ այն՝ որ առանձին
Ու զոհ կ'ապրի լոկ իր անձին;

090US0U 7

Իր ոգիով կամաց կամաց
Պիտի ազնիւ ըլլայ զինին.
Սիրտին առջեւ, խփդին զիմաց
Պիտի շնուրի առաքինին:

090US00 8

Կեանք մատուած դադարման՝
Միրով միայն կ'ուռմանայ.
Մէրը կեանքին դեղ, դարման՝
Զք պիտ' երբեք զուր ջանալ:

090US0U 9

Մէկ փունջի մէջ շուշանն ու վարդ
Կը յարմարին զննալորէն,
Եերն եւ առոյգ երփառարդ
Դործը որբա՞ն յաւ կը վարեն;

ՕԴՈՍՏՈՒ 10

Պիտի շանթեր
Խսնէք հեղիք՝
Երբ ամպերու
Մէջ դեղերիք:

ՕԴՈՍՏՈՒ 11

Նըպաստակով
Մարդ մեծ է լոկ,
Կերպ ցոյց կուտայ
Մարդը խելօք:

ՕԴՈՍՏՈՒ 12

Սիրտ անստգիւտ
Եւ կամք սովկուն
Են հազուազիւտ
Զարդեր հոգուն:

ՕԴՈՍՏՈՒ 13

Զեր կեանքն, իրաւ, որքա՞ն լաւ է,
Ճըմի, ճըպուռ եւ թիթեռնիկ,
Մէ՛կ երջանիկ օր ծեզ բաւ է,
Վաղն ալ զոհսիրտ պիտի մեռնիք:

ՕԴՈՍՏՈՒ 14

Մեծ դղեակներ ապագային
Քեզ ներկայէդ միշտ կը զատեն.
Գրաւուած յոյսով անըրջային՝
Օրդ վայլելու չունիս ատեն:

ՕԴՈՍՏՈՒ 15

Գեղեցկութիւն կայ անըսպառ.
Տիեզերքին ծոցը անհուն,
Բայց, ոհ, զեռ շատ կը պակսի բառ,
Եւ սիրտը բաւ չէ ամէնուն:

ՕԳՈՍՏՈՍ 16

Տունէս ելայ ու խենթի պէս
Երջանկութիւն վնտուեցի ես.
Ամէնքին նոյն էր պատասխան՝
«Մարդ, ետ դարձիր, տունըդ է ան: »

ՕԳՈՍՏՈՍ 17

Գիտէք, ինչո՞ւ վիշտեր հսկայ
Մեծ տունի մէջ կը բընակին.
Անոնց համար շատ նեղ կուգայ
Դուռն աղքատի ցած տընակին:

ՕԳՈՍՏՈՍ 18

«Լոկ մէկ անզամ նայինք համին»
Կ'ըսեն շարքեր անվախման.
Եթէ զիշար մէկ անզամին՝
Եղար անձիդ դաւաճան:

ՕԳՈՍՏՈՒ 19

Մահը չարիք մըն է տըկար,
Սիրոյ վէրքին հաւսար չի գար.
Սիրոյ վիշտը դուն անվըրդով
Տօնախմբէ հըպարտ սըրտով:

.....
.....
.....
.....
.....

ՕԳՈՍՏՈՒ 20

Վիշտը յրւնի տօն, կիրակի,
Ան աշխուժով կը ճարակի,
Պիտ' արցունքն հոն հոսի 'նանիր,
Բոցը իւղով չի սընանիր:

.....
.....
.....
.....
.....

ՕԳՈՍՏՈՒ 21

Շուշանները տեսէք դաշտին,
Ոչ կը մանեն, ոչ կ'աշխատին.
Պատմուժաններն անոնց հարուստ
Միշտ կը հոգայ Տէրը վերուստ:

.....
.....
.....
.....
.....

09/08/2022

Այո՛, շատ բան ըրաւ ոսկին,
Խաղաց շատ լաւ, նաեւ վատ գեր.
Եթէ անսանք դարուց խօսքին՝
Ան լաւ գերի է, բայց վատ տէր:

09.08.2023

**Քնացիր, հոգեակ, զիշեր բարի,
Երազդի մէջ զայն զըտիր,
Ստուերդ անոր թող պինդ փարի,
Երազ կամ կեանք — ի՞նչ լըտիր:**

09-00800 24

Առաջական են մեր վիշտեր,
Նըման զանոնք տածող սըրտին.
Յաճախ օդով լի են մինչեռ,
Ժայռերու աչս կը դրդրդին:

ՕԳՈՒՏՈՒ 25

Ուր կը պակսի
Եռանդ, փափագ
Կեանք կը դառնայ
Բան՝ մը տափակ:

ՕԳՈՒՏՈՒ 26

Աշխարհ սիսլիդ
Թէպէտ անզէտ՝
Բայց չես պրծիր
Խըղճմըտանքէդ:

ՕԳՈՒՏՈՒ 27

Գործը դատէ
Նրպատակէն.
Գէշ ջուր կուզայ
Լոկ վատ ակէն:

ՕԴՈՍՏՈՒ 28

Մէր, դուն աստղը բեւեռին,
Հոգիիս կեանք զերազանց,
Քե՛զ պիտ' աչքերս սեւեռին,
Դուն ուղղէ զիս զիշերանց:

ՕԴՈՍՏՈՒ 29

Խորշակներ շուտ մահ կըսպառնան
Գեղազուարմ կեանքի զարնան.
Բայց դուն, քնաղ զարուն սիրտիս,
Մինչեւ ի մահ պիտի ժապիս:

ՕԴՈՍՏՈՒ 30

Մէրն ալ ջըլար՝ անհըրաժեշտ
Պիտի տար Տէրն իր հըրաժեշտ,
Ու երկինքը՝ մութ եւ աւեր՝
Մընանկացա՛ծ պիտ' հոչակուէր:

ՕԳՈԱՏՈՒ 31

Եաղիկներ կան ժայռին վրան ալ,
Ան չի կրնար ցողն ուրանալ.
Այսօր ցուցու ես — կ'անցնի ներկան,
Ժայռին վրան ալ ծաղիկներ կան:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

Աստղերը քեզ պիտի նուիրեն
Իրենց կայծէն, ժըպիտներէն,
Ու սիրտիդ մէջ լուրջ, իմաստուն՝
Հըրաբուխներ պիտի զգաս դուն:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2

Եւ առտուան չափ գեղեցիկ,
Թոշուններու պէս երգեցիկ,
Քիչ մ'ալ աշնան նըման տժգոյն
Դիցուհի մը կ'ըլլաս իսկոյն:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 3

Հըպարտ, անուշ ակնարկներուդ
Տակ պիտ' հային սիրտեր ժեռուստ,
Եւ քու ոտքեր ուր որ կոխսն՝
Պիտի գարուն դուրս գայ հողէն:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 4

Եւ ա՛լ կ'օրմնես կեանքն ու երկին,
Լոկ սէր կ'ըլլայ նիւթ քու երգին,
Պիտ' աւաղես բայց՝ որ Աստուած
Թեզ գէթ երկու սիրտ չէ տուած:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 5

Ու այն ատեն պիտի կարդամ
Երթունքներուդ վըրայ տարտամ՝
Սիրտիդ զղումն արդարացի —
« Ինչո՞ւ այսքան ո՞ւշ զզացի: »

ՍԵՊՏԵՄԲԵՐ 6

Մըրիկ, կարկուտ շատ տեսաւ ան
ծընած օրէն մինչեւ այսօր,
Թայց ան մընաց աներկեւան,
եւ արդ եղաւ ընտիր խնծոր:

ՍԵՊՏԵΜԲԵՐ 7

Նոյն բաներ չեն պատիւ, դըրամ,
Մէջտեղը կայ մեծ մէկ խըրամ.
Պէտք է դրամին՝ կուռք աներես
Պատիւ, հանգիստ զոհալերես:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 8

Արեւուն տակ չիկայ նոր բան,
Դուն ալ ունիս կուռքեր, կորբան.
Պարտքը կուռք մ'է, սիրտն՝ ողջակէզ,
Մէրն ալ խունկի բոյր կուտայ քեզ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 9

Հոգ տար անձիղ,
Հոգ տար զանձիղ,
Եւ մանաւանդ
Բարի անուանդ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 10

Հազար փորձանը
Ալ դէմի կայնին
Դուն անսա լոկ
Խիլճիղ ծայնին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 11

Էշն ալ ունի
Իր եղանակ.
Այդ իր կեպն է,
Մի՛ նեղանաք:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 12

Խառնուածք, ճաշակ ու տեսակէտ
Խիստ տարբեր են. մեծ բաղդ է աս.
Դուն կըսպասես շատ բան քսակէդ,
Իսկ շաներդ ինձ կը թուին վընաս:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 13

Մեծ խնդրումի՝ լացն է զախման,
Մեծ վիշտէն վերջ՝ խնդրք յիմար.
Կեանքը ողբ չէ, ոչ ալ խրախման,
Ան տրուած է զործի համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 14

Հրդեհ զրաւեց քու խարխուլ յարկ,
Եւ դուն թողած կօշիկ, զիսարկ՝
Է՞ր ազատես ոտանաւորդ,
Երազատե՛ս օդանաւորդ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 15

Բացակայ ես, բայց անմոռաց
Յիշատակովդ բազմապատկուած
Սիրոյս համար, երկինք վըկայ,
Սիրտիս խորանն շատ նեղ կուզայ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 16

Նուիրական սիրոյ կապեր,
Երջանկութիւն եւ ընտանիք,
Կասկածն երբ ծեր վրայ է թափեր
Կաթիլ մը թոյն՝ կը կործանիք:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 17

Թու զիտցածին ու կրցածին
Մէջտեղը կայ մի մեծ խըսիր.
Գիտցածդ՝ յաճախ մըտացածին,
Կրցածըդ զանձ՝ մնայուն, ընտիր:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 18

Զիղջ մը բոցեղէն, խորունկ կսկիծներ
Շեշտ մ'ալ կը բարդեն շատերու ցաւին —
Թէեւ ապեցան, կրնային բայց դեռ
Միրել աւելի, միրուիլ տակաւին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 19

Մի՛ հոգար երբեք դուն վաղուան համար,
Վաղն ունի հոգեր անչափ, անհամար.
Օրբդ ապրէ դուն, աշխոյժ, քաջարի,
Եւ ուժեր դիզէ նոր նոր պայքարի:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 20

« Տասը արհեստներ մէկի փոխարէն
Եօթը մուրացկան յառաջ կը բերեն. »
Հաւ է դուն սորվիս մէկը հիմնովին,
Որ զլ մատնուիս ցուրտին ու սովին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 21

Վարդը լաւ է, բայց լոկ վարդով
Գոհ չըր ըլլար ամբողջ տարին.
Գործ ալ չըլլար լոկ մէկ մարդով,
Մարդ պէտք ունի միշտ օտարին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 22

Քեզ համբուրել չես կրնար դուն,
Ոչ ալ լիովին գընահատել.
Հայեցի է մարդը մարդուն,
Միբաէ ի սիրտ ճզուած կայ թել:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 23

Զուր կը ջանաս քեզ համար դուն
Բուն արժէքը զիտնալ մարդուն.
Ան ոչ հրեշտակ, ոչ ալ արջ է,
Մարդ է միայն, միշտ ալ չար չէ:

ԱԵՂՏԵՄԹԵՐ 24

**Մի՛ դատեր մարդս
Արուաքուստ.
Խաբած են միշտ
Զարդ, հազուստ:**

ԱԵՂՏԵՄԹԵՐ 25

**Քուրչեր շատ նեղ
Նայուածքէն
Ազնիւ տիպեր
Կը ծածկեն:**

ԱԵՂՏԵՄԹԵՐ 26

**Մոլի կեանքն է
Մի բազին,
Զոհեր կ'ուզէ
Ահազին:**

ՍԵՊՏԵՄԲԵՐ 27

Արտեր, հանքեր թող բազմարդիւն
Քուկը ըլլան, առ սէրն ալ ջինջ,
Ինծ թող միայն ճշմարտութիւն,
Ան ինծ համար է ամէն ինչ:

ՍԵՊՏԵΜԲԵՐ 28

Մարդը էակ մըն է ինկած,
Որ կանգնելու կ'ընէ ժիգեր.
Եւ կը կանգնի հո՞ն անկասկած
Ուր անկեալին վրայ է կըբեր:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 29

Ունիս արտեր, շտեմարան,
Լեփ լեցուն է քու մեծ մառան,
Եւ տանըդ կից աղքատ մը կայ
Կեղծ աղօթքիդ անդուլ վըկայ:

ԱԵՊՏԵՄՐԵՐ 30


Տիեզերքը յունի վեր, վար,
Նոյն են սիրոյ բարձունք, խորքեր.
Մարդու խեցին կուզայ դժուար
Քուրջին հաւսար սեպել գորգեր:

ՀՈԿՏԵՄՐԵՐ 1

Ան որ փշուբրին է ուշաղիր՝
Կեանքի մէջ չի յուսահատիր.
Փոքրիկ քայլեր տան մեծ խոստում,
Բընութեան մէջ չիկայ ոստում:

ՀՈԿՏԵՄՐԵՐ 2

Պարկեշտ մարդը աստուածուստ
Ծնորհուած մի զանձ է հարուստ,
Իսկ այդ զանձին բանալի՝
Կին ժիր, համեստ, սիրալի:



ՀՈԿՏԵՄԲԵՐ 3

Յամեակ առած բաւական են
Ձեզ վարելու յաջողապէս,
Եթէ ունիք բընականէն
Սիրտ մը առողջ, միտք հեռատես:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 4

Պէտք է չափէք փըշոտ ուղին՝
Մինչեւ հասնիք ջանքի պտուղին.
Քրտինքի վարձքն է առատ հասկ,
Կուտայ խոպան արտ լրկ տատասկ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 5

Զըրի կուտամ բոլորովին
« Քարեկամերս » բոլոր հովին.
Մէկն ալ բաւ է առատօրէն՝
Եթէ սիրտ չի պակսիք իրեն:

ՀՐԿՏԵՄԹԵՐ 6

Սուտ խօսին էր բան մի հիւրին,
Բայց զայն պահել՝ զործ մ'էր զըժուար.
Տեղ տային երբ անմիտ հիւրին՝
Ան դեռ շատերն կ'ընէր թրշուառ:

ՀՐԿՏԵՄԹԵՐ 7

Մոլութիւններ մրցում ըրին՝
Ընել մարդիկ իրենց գերին.
Գերիններու կար մեծ բանակ —
Սուտը տարած էր յաղթանակ:

ՀՐԿՏԵՄԹԵՐ 8

Եթէ զտար լաւ հատ մը միայն՝
Ա՛լ երկրորդի մը սիրտ մի՛ տար.
Բարեկամն է կընոչ նըման,
Սիրտ նեղ կուզայ շատին համար:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՀՈԿՏԵՄԲԵՐ 9

Կիրք՝ սատանի
Լարած վարմին
Զոհ կը տանի
Հոգի, մարմին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 10

Վրէժը մարդուն
Կ'երկնէ արթուն
Ոճիրով խառն
Արզասիք դառն:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 11

Սուրբ, անվընատ
Մէրէն ի զատ
Պիտ' ամէն ինչ
Ըլլայ բնաջինչ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 12

Ահա պատկերն նախանձորդի —
Հիւր մ'է նըման նախ՝ անցորդի,
Դաւանանքն է՝ « նախ անձ, որդի,
Եւ կը փոխուի նախանձ՝ որդի :

ՀՈԿՏԵՄԲԵՐ 13

Զեռունն անգամ դուն մի՛ խոտեր,
Ոչ ալ դաշտին անարգ խոտեր.
Աստեն կուզայ, կըզգաս դու զինն
Խոտի հոյզին, էշի շուքին :

ՀՈԿՏԵՄԲԵՐ 14

Դուք կաթիվն մէջ քբակինքին
Տեսէք օրէնքը երկնքին, ո
Իսկ ցոյին մէջ ծեր արտասուաց
Վիշտի չափով սէր դրաւ Աստուած :

ՀՈԿՏԵՄԲԵՐ 15

Փոքրիկ չարեաց կուտայ սընունդ
Յաճախ ուղին,
Մեծ չարիջի կուտայ ծընունդ
Նատախօս կին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 16

Յօդի հասին է նըման
Մարուր հոգին,
Կարտափայլէ նա լըման
Տեսքն երկինքին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 17

Մժզուկները լոյսին չորս դին
Ժիր կը վըխտան.
Փայլուն ներբողն է արուեստին
Թեւն ու շըղթան:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 18

Միտքէդ վանես երբ բաղին հարց՝
Կակուդ կուզայ քեզ բարէ բարձ.
Հաւատա դուն դարուց խօսին,
Սիրս եւ հանգիստ չունի ոսկին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19

Բաղդը շուրբիդ է շատ նըման,
եթի հալածես՝ կը փախչի ան.
Բայց եթէ դուն անկէ փախար՝
կը հնտեսի քեզ խենդաքար:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 20

Ազքերդ ուղղես երբ արեւին՝
Պատի շուքեր ա'լ չերեւին.
Մէրը կեանքիդ գուարթ արեւ՝
Միշտ կը ցրուէ մէզդ արդարեւ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 21

Թող սիրտս միշտ ըլլայ մանուկ,
Խոկ զըլուխըմ՝ լուրջ, խոհեմ,
Մարմինս՝ առողջ, ձեռքերս՝ բանուկ,
Ու վիճակէս ես զո՞ն եմ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 22

Բարի ըլլալ դիւրին զործ է,
Համոզուերու համար փորձէ.
Թէ որ ջանաս կեղծել բարին
Մտանմնած ես զործ դժուարին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 23

Եթէ զուրսը քեզ կը նեղեն՝
Դուն լայն պահէ սիրտը եւ տունդ.
Եթէ ասնք քեզի նեղ են
Ա՛լ քեզ համար կեանքն է անդունդ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 24

Ոչ անզին քար,
Ոչ ալ ոսկին
Հաւսար չեն զար
Միրոյ խօսքին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 25

Պաքտը, օդին
Ամէ՛, նաև
Բամբասողին
Մի՛ տար բարեւ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 26

Վիշտեր՝ նըման
Համեմանքին՝
Կեանքին կ'ըլլան
Համեմ անզին:

ՀՈԿՑԵՄԲԵՐ 27

Սէրն ինձ կը մեկնէ երկիր եւ երկին,
Աչքիս զիտակ է, ծեռքիս մէջ՝ քընար.
Հրապոյր մը կուտայ ան ամէն վէրքին,
Զոր չքիրողներ բնաւ չին հասկընար:

ՀՈԿՑԵՄԲԵՐ 28

Բաղեղ՝ բաժնուած ծառէն կամ պատէն
Թէեւ նուաղի՝ մեռնիլ չի ցանկար.
Վիշտով մենք սլնանք երկար մէկ ատեն,
Մեռնելու անկամ, ապրելու անկար:

ՀՈԿՑԵՄԲԵՐ 29

Դիւրին սէրեր, ծոյլ հաճոյքներ չեմ ուզեր,
Պէտք է ըլլան անոնք մէկ մէկ յաղթանակ.
Կ'ընտրեմ կեանքի մաքառումներն եւ յոյզեր,
Փուշին, փառքին ժամբան նոյն է շարունակ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 30

Ինչ լաւ կ'ըլլար, ախ, ի՞նչքան լաւ,
Եթէ զի զար այդ վաղը,
Ու մընայինք մենք մութին ծոց
Ոչ յաղթական, ոչ պարտեալ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

Սիրտ, ոտամոքս, պէտք է զիտնաս,
Բաներ ունին շատ նըմանած.
Շատ սէր, շատ հաց կուտան վընաս,
Մարդ ալ չապրիր անսէր, անհաց:

ՆՈՅԵՄԲԵՐ 1

Անփոյթ անցնիք երբ ասեղէն,
Եւ բրդուժէն կերպասեղէն՝
Օք մ'ալ կարօս կըրնաք մընալ
Եւ ցոյց տալ մերկ կըռնակ մ'ըն ալ:

ՆՈՅԵՄԲԵՐ 2

Երջանկութիւն հիմակ ո՞ւր է.
Հոս ի՞նչ լըման ու մաքուր է.
Անապա՛տ է կեանքն իմ մասիս,
Իսկ Սէրն՝ անոր մէջ ովասիս:

ՆՈՅԵՄԲԵՐ 3

Չենք գնահատեր լիովին
Օդ, ջուր եւ լրյս օրհնաբեր.
Թանկ առածներն ալ հովին
Կը յանձնենք խիստ անտարբեր:

ՆՈՅԵՄԲԵՐ 4

Ցօղը որքան վայէ վարդին՝
Անկեղծութիւն՝ նոյնքան սիրտին.
Երկուքին մէջ ալ պարզապէս
Երկնից պատկերը կը տեսնես:

ՆՈՅԵՄԲԵՐ 5

Կրակը մուխին, գործը զըրին
Ընկեր զըտանք,
Եւ դրացնութեան դաշինք ըրին
Սէր եւ վլտանգ:

ՆՈՅԵՄԲԵՐ 6

Ներբողները բարեկամիս
Զիս չեն թովեր.
Բայց զիս գովէ երբ թշնամիս՝
Կ'առնեմ թեւեր:

ՆՈՅԵՄԲԵՐ 7

Ինձ դատախազ կամ փաստաբան
Բաւ է անճն իմ.
Դուրսի ճայներ չեն ինձ խափան,
Կը լսեմ, կ'անցնիմ:

ՆՈՅԵՄԲԵՐ 8

Հաստատ զիտէ
ծերը խելօք,
Հասակն անփորձ
Կը կարծէ լոկ:

ՆՈՅԵՄԲԵՐ 9

Կը ժպտի միշտ
Բաղրը՝ արթուն
Եւ չանասէր
Բարի մարդուն:

ՆՈՅԵՄԲԵՐ 10

Սիրտ չեն շէնցներ
Ուկի, զմուռս,
Աշխարհ մ'ալ կայ
Շուկայէն դուրս:

ՆԱՅԵՄԹԵՐ 11

Զեր սերմն ըլլայ գէշ կամ աղէկ՝
Պըտուզն անշուշտ պիտի քաղէք.
Արտեր՝ որ չեն սեսած գութան՝
Անարդ խոտեր միայն կուտան:

ՆԱՅԵՄԹԵՐ 12

Բիւրաւոր զոհ ունի ոսկին,
Դուք զայն պաշտել մի՛ զիշանիր.
Նոյնքան շատ են զոհեր խօսքին,
Հագուազիւտ է մարդ երջանիկ:

ՆԱՅԵՄԹԵՐ 13

Ոսկին տիղմի մէջ նետեցին —
Հոն՝ ալ պահեց իր փայն ու փառք.
Մետաքսի մէջ դըրին խեցին —
Շեշտուեցաւ իր տեսքն անարդ:

ՆՈՅԵՄԲԵՐ 14

Արժանիքներ, ինչպէս զետեր,
Իրենց ճամբան են միշտ գրտեր.
Գետի պէս ալ օգտակար են,
Չեն ընկըրկիր տիղմէն, քարէն:

ՆՈՅԵՄԲԵՐ 15

Սիրամարգ մը, առիւծ, կապիկ
Դուք տեսնելու շուտ կը թափիր.
Նոյնպէս կին, ոյժ եւ ծաղրածուն
Կըզբաղեցնեն խեղճ մահացուն:

ՆՈՅԵՄԲԵՐ 16

Թէ որ չառփր համը ցաւին
Լըման մարդ չես դուն տակաւին.
Թէ չունեցար օր մը գուարի՝
Դարձեալ դուն չես կատարեալ մարդ:

ՆՈՅԵՄԲԵՐ 17

Առատ խոսում տուղ մարդէն
Կեանքիդ մէջ բան մի՛ սպասեր.
Խօսքէն զատ բան չունի արդէն,
Հիւանդ մ'է ան, ոչ մարդասէր:

ՆՈՅԵՄԲԵՐ 18

Անգամ մ'ըսաւ բաղզը պարտքին՝
« Շուտ վերցուր սա լեռն ահազին.
Կրնաս առնել ջրս, հինգ ընկեր. »
Պարտքն ըսաւ՝ « Ինծ բաւ է լոկ սէր: »

ՆՈՅԵՄԲԵՐ 19

Բաղզը կոյր չէ, կոյր են մարդիկ,
Որ տենդազին զայն կը փնտուեն,
Մինչ ան օդի պէս հանդարտիկ
Կը պատէ մեզ ներսէն, դուրսէն:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՆՈՅԵՄԲԵՐ 20

Պիտի չարժէ՛ր, պիտի չարժէ՛ր
Ու երկու թիգ կեանքն ապրիլ՝
Եթէ ըլլար ձշմարտութեան
Համար պայքարն հոյակապ:

ՆՈՅԵՄԲԵՐ 21

Հըրաշագործ, սրբարար
Ոյժ ունի սէրն անպատճառ.
Ան՝ Մովսէսի գաւազան,
Ան՝ Սելովի աւազան:

ՆՈՅԵՄԲԵՐ 22

Ախ, Ե՞րբ վերնան պիտի, Տէր իմ,
Նախանծ, կըուիւ այս աշխարհէն.
[Զայն մը ըսաւ ինձ մըտերիմ՝]
— Երբոր կիներ ապաշխարեն:

ՆՈՅԵՄԲԵՐ 23

**Ախտ նախանձի
եւ սէր անձի
Փաստեր կուտան
Տըկարութեան:**

ՆՈՅԵՄԲԵՐ 24

**Ան որ մուլին
Շատ կ'երթայ մօտ՝
Կը կըրէ միշտ
Զիղչ եւ ամօթ:**

ՆՈՅԵՄԲԵՐ 25

**Փախուստ գործէ
Ու տաժանքէ
Մարմնոյն, հոգոյն
Համար ժանգ է:**

ՆՈՅԵՄԲԵՐ 26

Գիտեք, ո՞րն է տիպար կին.
— Ան որ կը լուէ ի հարկին.
Գիտեք, ո՞րն է այր տիպար.
— Ան որ գործէ խոյս չի տար:

.....
.....
.....
.....

ՆՈՅԵՄԲԵՐ 27

Խաղը որքան ալ որ գովեն՝
Խաղամովին փախիր քովէն.
Մոլութիւններ կը նըմանին
Ամէնակուլ զերեզմանին:

.....
.....
.....
.....

ՆՈՅԵՄԲԵՐ 28

Սիրտս կը ցանկայ բնութեան տեսքին՝
Ինչպէս հիւանդն առողջութեան,
Եւ բարութեան շռնչեր ուժգին
Իմ հոգիս թափեր կուտան:

.....
.....
.....
.....

ՆՈՅԵՄԲԵՐ 29

Զմեզ զատեց բաղդին հարուած,
Բայց իմ սէրը քեզ չուրանար.
Մութին, լոյսին միշեւ լարուած
Արշալոյս մ'է ան բոցավաւ:

ՆՈՅԵՄԲԵՐ 30

Անձեւ, արեւ ու ծխածան
Տէրն են կեանքին միահեծան.
Վաղը կրկնուին պիտի բաներ
Որ երէկ ալ պատահեցան:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1

Երգեցէք միշտ, մատղաշ, պառաւ,
Երգ կը մարէ վիշտին ծարաւ.
Մանուկի պէս են ցաւերն ալ,
Օրոլներով կ'ուզեն քնանալ:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2


Թոյսը ի՞նչ է մարդոց.
— Թէ խըթան, թէ խարտոց:
Մէրը ի՞նչ է կընկան.
— Թէ զերի, թէ իշխան:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 3

Միշտ սիրէ՝ թէ լաւ է,
Մի՛ ըսեր՝ ա՛լ բաւ է,
Իսկ վատին դէմ բողոք
Բարձրացուր անողոք:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 4

Գործը մանաւանդ՝
Ընտիր զարդ ծեռքին
Քան թէ աղամանդ
Փայլուն, թանկազին:



ԴԵԿԱՄԵՐԻ 5

Հըսկարսութիւն քայլայման
Է ապահով մի պայման,
Ու կործանման առջեւէն
Մնամէջ փառքեր կը...ցուեն:

ԴԵԿԱՄԵՐԻ 6

Երշանկութիւն, գանձ անզին,
Կը մաղթեմ ես ծեր հոգուն,
Ու սեւ օրի փործանքին
Դիմադրելու սիրտ տոկուն:

ԴԵԿԱՄԵՐԻ 7

Սպառումը աժեցման
Անհրաժեշտ է պայման.
Սէրն է որբան սպառած՝
Այնքան մօտ է նա փառաց:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 8

Վայելք ուժգին
Նատ քիչ օրէն
Սիրտը կրկին
Կը տոչորեն:

ԴԵԿԵՄԵՆՏՈՒԹՅՈՒՆ 9

Շատ խորհողներ
Միշտ կիսովին
Են մատնուեր
Գործի սովին:

የԵԿՏԵՐԱታር 10

Աղուոր մի սիրտ,
Խելք ապիկար՝
Ադ ալ շատ մէկ
Բանի չի գար:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 11

Աճապարանք, աճապարանք,
Անթիւ գործեր մեզ կը պատեն.
Զուր կը շինենք տուն, ապարանք,
Խնդալու խսկ չունինք ատեն:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 12

Քաղել, ուտել նոյն բաներ չեն,
Մարսելու զործ ալ կայ վերջէն.
Կարդալ, հասկնալ չեն նոյն բաներ,
Եւ իւրացնել՝ նոյնքան տարբեր:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 13

Փըշեց խորշակ, մեռաւ տերեւ.
Զանցուց ան իր կեանքն ի դերեւ.
Տաքին դէմ ան պտուղին քող էր,
Հիւր էր ըրած երկնից ցողեր:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 14

Երջանկութեան պատկերին
Եղան մարդիկ շատ գերին,
Ու տակալին կ'երազե՞ն
Դղեակ շինել աւագէն:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 15

Անուշ երգեր սոխակին,
Վարդի թերթեր ցողազին,
Զեփիւռ, քընար, փայլն աստեղ
Փոր չեն լեցներ, բանաստեղծ:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 16

Վիշտը՝ մանուկ անօթի
Կաթի, ինամքի կարօտի.
Եւ դուն ամէն բան ներես
Այս մանուկին աներես:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 17

Ափ մը հողէն է ծընած,
Ափ մը հողով է սընած,
Ափ մը հողի կը փոխուի,
Ահա վէպը մեր կենաց:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 18

Այսօր միայն, ոհ, այսօր
Գեղեցիկ ես ու հըզօր.
Վաղը, ափսոս, այն վաղը
Պիտի բերէ դազաղը:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 19

Աշխատողին համար հաց
Համեր է քան խորոված.
Հարուստ, աղքատ, մանչ, աղջիկ,
Աշխատանք; մի՛ փախչիք:

ԴԵԿԱՍԵՄԲԵՐ 14

Երջանկութեան պատկերին
Եղան մարդիկ շատ գերին,
Ու տակաւին կ'երազե՞ն
Դղեակ շինել աւազէն:

ԴԵԿԱՍԵՄԲԵՐ 15

Անուշ երգեր սոխակին,
Վարդի թերթեր ցողազին,
Զեփիւռ, քընար, փայլն աստեղ
Փոր չեն լեցներ, բանաստեղծ:

ԴԵԿԱՍԵՄԲԵՐ 16

Վիշտը՝ մանուկ անօթի՝
Կաթի, խնամքի կարօտի.
Եւ դուն ամէն բան ներես
Այս մանուկին աներես:

ԴԵԿԱՑԵՄԲԵՐ 20

Խայթող մեղուն կ'իյնայ զետին
Ու կը փըցէ շռնչն իր յետին.
Ասկէ սորվիլ դուն կրնա՞
Խայթողինն է բուն վլնաս:

ԴԵԿԱՑԵՄԲԵՐ 21

Յորեկն որքան ըլլայ պայծառ՝
Այնքան մըթին կ'ըլլայ ստուերն.
Դիշերն որքան ըլլայ խաւար՝
Պիտ' այնքան ջինչ պլավան աստղերն:

ԴԵԿԱՑԵՄԲԵՐ 22

Մանուկնե՞րն ալ չըլլային
Եւ տիսրութեան ծմրային
Զըաշորդէր պերժ Ապրիլ՝
Ո՞վ պիտ' ուզէր դեռ ապրիլ:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 23


Սիրոն է մարդուն
Յաճախ ժեռուս,
Վստահէ դուն
Լոկ ուժերուդ:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 24

Մօսը մ'երթար
Արքեցողին.
Շատ սիրու ու քսակ
Պարպեց օղին:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 25

Թու շիրմիդ մօս
Ամէն բիրան՝
Կրնա՞յ ըսել՝
Մարդ մըն էր ան:



ԴԵԿԾԵՄԲԵՐ 26

Ամէն քանի կայ մէկ վախճան,
Զուր կը տանջէ քեզ սեւ խորհուրդ.
Կեանք լոկ ցաւ չէ, ոչ ալ խրախճան,
Այլ երկուրին հաւսար խաւնուրդ:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 27

Տրտունջէն ո՞վ քաղեց օգուստ,
Դործն է կեանքին օրէնքն աւազ.
Պարտքը աշխոյժ կուտայ հոգուդ,
Որ ան չըլլայ գութի նշաւակ:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 28

Հրէ կեանքիդ նըշանաբան
Գործել ուղիղ, անդուլ, սիրով,
Եւ չմանչնալ ոչ մէկ խափան
Ու չարին դէմ մնալ անխըռով:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 29

Թող քու սիրտիդ ըլլայ պաշար
Քաջութեան հետ սէր ծշմարիտ.
Նըկարազիր մը անկաշառ
Ընտիր սեպէ քան մարգարիտ:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 30

Նեղ շրջանիդ մէջ կրնաս դուն
Կեանը մը ըլլալ խիստ օգտակար.
Գործեր ուղիդ եւ լիմաստուն
Մեծ կեանքերու են հիմնաքար:

ԴԵԿԾԵՄԲԵՐ 31

Եւ քու սիրտիդ բարախման հետ
Կը դազրի զործն քու մատերուն,
Բայց ցանած լրյադ չըլլար անհետ,
Պիտի ազդէ դեռ շա՛տ հեռուն:





Ամէն իրաւունք հեղինակին վերապահուած է :

ՀՀ Ազգային գրադարան



NL0339143

24904